ԿԱՐԾԻՔ

ՌՈԶԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱԲԱՋՅԱՆԻ

«Անմիջական ժողովրդաիշխանության տեսական ակունքների և ինստիտուցիոնալ իրավական ձևերի պատմական էվոլուցիան Հայաստանի նորագույն շրջանի սահմանադրական զարգացման պրակտիկայում» թեմայով ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետաիրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Կարծիքի ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի երեք հանրապետություններում ժողովրդաիշխանության անմիջական ձևերի և վիճակի ուսումնասիրությանը: Հիմնվելով ժողովրդաիշխանության տեսությունների վրա, կարևորելով ժողովրդաիշխանության անմիջական ձևերի դերը և նշանակությունը հանրային խնդիրների լուծման և հետևողական զարգացում ապահովելու գործընթացներում, հայցորդը վեր է հանել տարբեր ժամանակաշրջաններում հայ քաղաքական-իրավական մտքի ներկայացուցիչների պատկերացումները, առանձնահատկությունները և դրանց գործնական իրագործման ձևերը Հայաստանի նորագույն շրջանի պետականաշինության գործընթացների մեջ: Հենց այստեղից էլ բխում է հետազոտության թեմայի արդիականությունը, որն ակնհայտ է և՛ համաշխարհային զարգացումների ու միտումների, և՛ Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած ու արդի զարգացումների տեսանկյունից:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում ՀՀ-ում գործող ժողովրդաիշխանության կառուցակարգերի ամբողջական, համալիր ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ եղել են ժամանակահատվածներ, որոնց գիտական

ուսումնասիրվածության աստիճանը հետազոտության առարկայի իմաստով բավական բաց է: Սա առաջին հերթին վերաբերում է նուրագույն շրջանի հայ քաղաքական իրավական մտքին, ինչպես նաև Առաջին Հանրապետության պետական կառուցակարգին, որոնց ուսումնասիրությունը, փորձը և դասերը կարևոր նշանակություն ունեն պետականաշինության արդի խնդիրների համար: Ատենախոսության մեջ անդրադարձ է արված ինչպես այդ ժամանակաշրջանի գործընթացների վրա ազդեցություն ունեցած միջազգային գործոններին և դրանց դրսևորումներին, այնպես էլ հայ իրավական և քաղաքական մտքի ներդրումին սահմանադրական մտքի զարգացման գործում, ընտրական իրավունքին առնչվող հարցերի մշակման և հետագա ներդրման, տեղական ինքնակառավարման և սահմանադրական մտքի զարգացման և իրականացման այլ հարցերի մեջ:

Ժողովրդաիշխանության հիմնահարցերի հետազոտման տեսանկյունից կարևոր և հետաքրքրական է նաև աշխատութան մեջ հեղինակի կատարած անդրադարձներն անմիջական ժողովրդաիշխանության հիմնահարցերի զարգացումներին, իշխանության իրականացման կառուցակարգերի սահմանադրական կարգավորման ձևակերպումներում կատարված փոփոխություններին Երկրորդ Հանրապետության ժամանակահատվածում: Այստեղ կարևոր են ընդհանուր, հավասար, ուղղակի սկզբունքների հիման վրա գաղտնի քվեարկությամբ ընտրությունների, պատգամավորների հետկանչի ինստիտուտի, համաժողովրդական հարցման կամ հանրաքվեի ինստիտուտների, ինչպես նաև, «ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին» սկզբունքի ներմուծումը հանրային իշխանության իրականացման գործընթացներում Երկրորդ Հանրապետության տարբեր ժամանակահատվածներում, որոնց ուսումնասիրությունը թույլ է տվել հանգել փաստարկված և հիմնավոր եզրահանգման այն մասին, որ քայլ առ քայլ նկատվում էր ակնհայտ միտում. ժողովրդաիշխանության անմիջական ձևերը

ճիշտ է դանդաղ, բայց ընդլայնվում էին, իսկ եղածները ձեռք բերում ժողովրդավարական բնույթ, դառնում իրական գործոն:

Ատենախոսի կողմից առավել ուշագրավ անդրադարձեր են կատարվել ժողովրդաիշխանության սկզբունքի սահմանադրական ամրագրման համաշխարհային փորձին և ժամանակակից Հայաստանի սահմանադրական զարգացումներին, ընթացիկ օրենսդրական կարգավորումներին: Անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտի կայացման, դրա տարբեր ձևերի ամրագրման և կատարելագործման գործընթացների, տարբեր երկրների օրենսդրության մեջ տեղ գտած և գործող պրակտիկայում կիրառված սահմանադրական կառուցակարգերի և պետականաշինության զարգացումների պատշաճ գիտական ուսումնասիրությունը թույլ է տվել հեղինակին հանգել որոշակի եզրակացությունների, որոնք կարող են օրինաչափությունների վրա կառուցված գիտական խորհրդատվություն հանդիսանալ արդի ժամանակաշրջանի և ապագայի սահմանադրական կառուցակարգերի հետագա կատարելագործման համար, այդ թվում անմիջական ժողովրդաիշխանության եղած ձևերի ընդլայնման, լավարկման և չեղածների ամրագրման ուղղությամբ: Արդյունքում հեղինակին հաջողվել է հետազոտման առարկային վերաբերող բազմաթիվ տեսական նյութերի, օրենսդրական և այլ փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա մշակել գիտական նորույթ պարունակող մի շարք դրույթներ, որոնք ունեն ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն, քանզի կարող են օգտագործվել օրենսդրության կատարելագործման ընթացքում:

Աշխատանքն աչքի է ընկնում կուռ համակարգով և ներքին տրամաբանական կապով, կատարված եզրակացությունները և դրույթները գիտականորեն հիմնավորված են, ունեն արդիականություն և կարող են օգտակար լինել պետահրավական բարեփոխումների մեջ:

Ատենախոսության պաշտպանության ներկայացված գիտական դրույթները և եզրահանգումները ճշգրիտ են, մանրազնին հիմնավորված ինչպես ժողովրդաիշխանության տեսության դիրքերից, այնպես էլ պատամաիրավական փաստերով, անցյալի և գործող նորմատիվ նյութով:

Աշխատանքի արժանիքներից են նաև հեղինակի կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումները, որոնց արդյունքում ստացված տվյալների վերլուծության հիման վրա կատարվել են հետաքրքիր եզրահանգումներ:

Ատենախոսությունն ունի նորույթի պատշաճ աստիճան, քանի որ դրանում հետազոտվել են անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտները Հայաստանի երեք հանրապետություններում, դրա ձևերի իրավական ամրագրման, կայացման և գործառույթային առանձնահատկությունները, ժողովրդաիշխանության ամեն մի տիպի հիմքում ընկած հայեցակարգային բնութագրերը: Միաժամանակ հետազոտությամբ փորձ է արվել ոչ միայն վերհանել ժողովրդաիշխանության ինստիտուտի կայացման ամբողջական իրավական պատմությունը, այլև առաջ քաշել ներկա ժամանակաշրջանում դրա կատարելագործման ու ժողովրդաիշխանությունն անշրջելի դարձնելու գործնական առաջարկներ: Այս ամենը հիմք է տվել հեղինակին ձևակարպել բավականին գրագետ տեսական եզրակացություններ ու պաշտպանության հանվող դրույթներ, որոնք ունեն ոչ միայն պատամաիրավական, այլ նաև արդիական գործնական նշանակություն:

Արաժանիքներով հանդերձ պետք է արձանագրել, որ ատենախոսությունը առաջ է բերում որոշ դիտողություններ, մասնավորապես՝

1. Ատենախոսության ուսումնասիրությունից երևում է, որ հեղինակը քննադատորեն է մոտենում 1995 թ. ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված Սահմանադրության 2-րդ հոդվածի անփոփոխելիության դրույթին՝ և՛ դրա անփոփոխելիության և՛ ձևակերպման իրավական բովանդակության տեսանկյունից: Այս հարցում հստակ երևում է, որ հեղինակը քննադատում է այդ դրույթը գտնելով, որ Սահմանադրության անփոփոխելի հոդվածներ չեն կարող լինել: Սակայն

բովանդակային քննադատության առումով հստակ չէ հեղինակի դիրքորոշումը և առաջակությունը: Այսինքն մենք չենք տեսնում հեղինակի կողմից առաջակվող իրավական նոր ձևակերպումը 2-րդ հոդվածի համար: Հետևաբար հետաքրքիր կլիներ այս հարցում լսել հեղինակի տեսակետը և բացատրությունները:

2. Պաշտպանության ներկայացված 10-րդ դրույթում հեղինակն առաջարկում է ժողովրդաիշխանության ոլորտում ապագայի իրավական քաղաքականության հիմնադրույթները, այն է՝ ժողովրդաիշխանության եղած ձևերի լավարկում, չեղածների ամրագրում, ժողովրդավարական սոցիալացում և իրավական դաստիարակություն, ժողովրդաիշխանության պատշաճ ձևերի անընդհատ կիրառում, թոթափելով հանրահավաքային, ցուցարարային, համացանցային խաբուսիկ ժողովրդավարության ահագնացող ալիքը: Սրանցից մի քանիսի հետ դժվար է համաձայնվել, մասնավորապես, ընդհանուր ասած ժողովրդաիշխանության ընդլայնման հարցում, որովհետև մեր օրերի փորձը ցույց է տալիս, որ, երևի թե, պետք է այդ հարցում անցնել ավելի պահպանողական քաղաքականության: Մեր կարծիքով մեր օրերի միտումները տանում են ամենաթողության ու պոպուլիզմի:

Մատնանշված դիտողությունները, այնուամենայնիվ, չեն նսեմացնում ատենախոսության գիտագործնական արժեքը, կրում են բանավիճային բնույթ և թեմայի հետագա ուսումնասիրությունն ավելի ամբողջական դարձնելու նպատակ են հետապնդում:

Գիտական հանդեսներում հեղինակի հրատարակված վեց հոդվածները, ատենախոսությանը վերաբերող թեմաներով գիտական զեկուցումները արտացոլում են աշխատանքի հիմնական դրույթները:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ռոզա Անդրանիկի Աբաջյանի «Անմիջական ժողովրդաիշխանության տեսական ակունքների և ինստիտուցիոնալ իրավական ձևերի պատմական էվոլուցիան

Հայաստանի նորագույն շրջանի սահմանադրական զարգացման պրակտիկայում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով սահմանված պահանջներին:

Հեղինակը՝ Ռոզա Անդրանիկի Աբաջյանը արժանի է ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետաիրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավ. գիտ. թեկն., դոցենտ **Ա.Լ. Ասատրյան**

ի. գ. թ., դոցենտ Ա.Լ. Ասատրյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ Փաստաբանական դպրոցի տնօրեն
իրավ. գիտ. թեկնածու
Ս.Ա. Բաբայան

25.06.2020 թ.